# ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՀՈՒՆԻՍԻ ՄԵԿԻՆ ԸՆԴԱՌԱՋ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՇԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹԻ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՑՎԵԼ Է ՄԻՆՉԵՎ ՄԱՅԻՍԻ 30-Ը

24.05.2016 11:25




ՀՀ փաստաբանների պալատը երեխաների իրավունքների պաշտպանության տոնին ընդառաջ 7-ից 15 տարեկան երեխաների համար հայտարարում է ԵՍ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՄ խորագրով շարադրությունների մրցույթ:

Շարադրությունները չունեն տեքստային կամ քանակական որևէ սահմանափակում:

Խնդրում ենք աշխատանքներն ուղարկել press@advocates.am հասցեին մինչև մայիսի 30-ը: Էլեկտրոնային նամակում պետք է նշել երեխայի անունը, հայրանունը, ազգանունը, դպրոցի անվանումը, դասարանը և հեռախոսահամարը: Արդյունքները կամփոփվեն և լավագույն շարադրությունների հեղինակներին մրցանակները կհանձնվեն հունիսի մեկին:

Հարցերի համար զանգահարել՝ 094536002 ՀՀ փաստաբանների պալատի մամուլի խոսնակ Ծովինար Խաչատրյանին:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
մամուլի կենտրոն

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })